

25.434

Պրալետարքներ բոլոր յերկրների, միացեք.

(Բ) ԿԵՆՏԱԿՈՂԻ ՅԵՎ ԲԱԳԿՈՂԻ ՄԵԹՈՂԲՅՈՒՐՈ

ԼԵՆԻՆԻՑԻ ՌԱՍՏ ՄԵՆԱՀԻՐՈՒՅՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ  
ԴՊՐՆԳՆԵՐԻ ԽԱՆԱՐ



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

(Առաջին յեվ յերկրորդ պարագամութեների համար)

333

12-64

ԿՈՒԶՃՐԱՏ — 1935 — ԲԱԳՈՒ

19 FEB 2013

25.434

15 JAN 2010

333  
4-64

Հայերենը խմբագրեց Հ. ՍԱՐԴՈՅԱՆ  
Թաղթ - Ա. Ազեն ԵԱՆ  
Տեխնիկագիր Կ. ԹԱՌԻԱՆՅԱՆ

Հանձնված ե արտադրության 28/II  
Սառագրված ե տպագրելու 8/II  
Տպագրաւուն թերթերի թիվը 3  
Տպագրական նշանների թիվը 133,730

## ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Այս թեմայից յևս վերցնում եմ չորս հարց. ա) հարցի դրույթ. բ) գյուղացիությունը բուրժուատ - գեղակրաստական հեղուկության ժամանակ. գ) գյուղացիությունը պրովետարական հեղափոխության ժամանակ. դ) գյուղացիությունը խորհրդական իշխանության ամբողջությունը հետո:

1) Հարցի դրսւմը: Վորանք կարծում են, վոր հիմնականը լենինիզմում՝ գյուղացիական հարցն ե, վոր լենինիզմի յելակետը գյուղացիության, նրա դերի, նրա տեսակարար վեցուի մասին յեղած հարցն ե: Դա միանգումարյն սխալ է: Հիմնական հարցը լենինիզմում, նրա յելման կետը վոչ թե գյուղացիական հարցն ե, այլ պրոլետարիատի գիշտատուրայի, նրա նվաճման պայման ների, նրա ամբաղնդման պայմանների մասին յեղած հարցը: Գյուղացիական հարցը, վորպես իշխանության համար մղած պայքարում պրոլետարիատի դաշնակցի հարց — նրանից բղնող հարց է:

Այս հանգամանքը, ասկայն նրան յերբեք չի դրկում այն լուրջ, կենսական նշանակությունից, վորն՝ անկասկած՝ ունի նա պրոլետարական հեղափոխության համար: Հայտնի յե, վոր գյուղացիական հարցի լուրջ մշակումը ուստական մարքսիստների շարքերում սկսվել ե հենց առաջին հեղափոխության (1905թ.) նախորյակին, յերբ ցարիզմը տասկրելու և պրոլետարիատի հեգեմոնիա անցկացնելու հարցը ծառացել եր կուսակցության առաջ ամբողջ հասակով, իսկ առաջիկա բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակցի հարցը կենսական բնույթ եր ստացել: Հայտնի յե նույնական, վոր գյուղացիական հարցը Ռուսաստանում ել ամենի հրատապ բնույթ և ստացել պրոլետարական հեղափոխության ժամանակ, յերբ պրոլետարիատի դիմուսուրայի, նրա նվաճման և պահպանման հարցը բերել եր առաջիկա պրոլետարական հեղափոխության մեջ պրոլետարիատի ունենալիք դաշնակցիցների մասին յեղած հարցին: Յեկա հասականալի յե, ով պատրաստվում և դնում է գեպի իշխա-

նությունը, նաև չի կարող չհետաքրքրութել իւր իսկական դաշնակցության համար:

Այս խմաստով գյուղացիական հարցը հանդիսանում եւ պրո լատարիատի դիկտատուրայի ընդհանուր հարցի մի մասը և վոր պիտի այլպիտին, լինինիվմի ամենակնտական հարցերից մենքն են ներկայացնում:

Յերկրորդ ինսեքնացիոնալի կուսակցությունների կողմէց գյուղացիական հարցի վերաբերմանը յեղած անտարբեր, այլաւ գյուղացիական հարցի վերաբերմանը բացառովում եւ պիտի ուղղակի բացառական վերաբերմունքը բացառովում եւ պիտի միայն Արևմուտքում յեղած զարգացման առանձնահատուկ վորչ միայն Արևմուտքում առաջնորդում է նաև և առաջ նրանով, վոր պայմաններով: Դա բացատրվում է նաև և առաջ նրանով, վոր պայմաններով: Դա բացատրվում է նաև և առաջ նրանով, վոր պայմաններով չեն հավաստում պրոլետարական դիմությունը չեն հավաստում մասամբ առաջնորդում առաջնորդում է նաև չի ուղարկի իշխանությունը, նաև չի կարող հատաքրքրվել ընդհանուր պետական մեջ պրոլետարիատի գաշնակիցների հարցով, — հեղափոխության մեջ պրոլետարիատի գաշնակիցների հարցով, — նրա համար գաշնակիցների հարցն անտարբեր, վորչ ակտուալ նրա համար գաշնակիցների հարցի նկատմամբ՝ ներսուների հետական վեհարց եւ Յերկրորդ ինսեքնացիոնալի հեղափոխական հարցի նկատմամբ՝ նրանց մաս քարեմ ունենք գյուղացիական հարցի նկատմամբ՝ նշան: Ար ըստ առնեն նշան եւ համարվում, «Խոհական» մարքսիզմի նշան: Ար ըստ պարեմ այստեղ մի գործն՝ մարքսիզմ չկա, վորովհետեւ անհար քարեմ այսպիսի հարցի նկատմամբ, վոր պիտի և գյուղական հարցը, պրոլետարական հեղափոխության նախորդական հանդիսանում եւ պրոլետարիատի դիմությունների համարձակ կողմը, մարքսիզմի ուղղակի դաշնամության անհամագործ կողմը, մարքսիզմի ուղղակի դաշնամության անհարայի նշանը:

Հարցն այսպես եւ կանգնած. արդեն սպառված են արդյոք գյուղացիության ընդէլքներում թագնված հեղափոխական հնար ստորոտւթյունները, նրա գյուղության վորուչ պայմանների ընոր չիվ թե՞ վոչ, և յեթե չեն սպառված, հույս, կիսէ կա՞ արդյոք սպառութելու այդ հարավորությունները պրոլետարական հետպարության համար, զարձնելու գյուղացիությունը, նրա չափագույն ժետարմանության՝ բուրժուազիայի ուղղերից, վոր հադրդվող ժետարմանության՝ բուրժուազիայի ուղղերից:

Լինինիվմն այս հարցին պատասխանում է գրականորմն, այս պիտին՝ գյուղացիության մեծամասնության շարքերում հեղափոխիսին յեղի եւ նրա Արևմուտքի բուրժուազիան հեղափոխությունների համար կ վորովիսին նաև մնում է հիմա, — պրոլետարիատի ուղղերից, նրա գաշնակիցը:

Լինինիվմն այս հարցին պատասխանում է գրականորմն, այս պիտին՝ գյուղացիության մեծամասնության շարքերում հեղափոխիսին յեղի եւ նրա Արևմուտքի բուրժուազիան գաղափոխությունների համար:

\*) Գրան — դեղուանական պարագաները կշռաբար. Ծանօթ.

խական ընդունությունների ընդունման վորով և նրանց՝ պրո վետարական դիկտատուրայի չահերի համար ոգտադրյալներ համար վորովության վորով: Յերեք հեղափոխությունների պատմությունը մասն առաջնորդման մասն մղած նրանց պայքարությունը և աղքատությունները: Այս չի նշանակում, իհարկե, թե պրոլետարիատը պետք է պաշտպանի ամեն տեսակի գյուղացիական շարժում: Խոսքն այստեղ գյուղացիական այնպիսի չարժման և այնպիսի պայքարի պաշտպանման մասին ե, վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հետադառնում են պրոլետարիատի աղքատպանի շարժումը, վորոնք այս կամ այն կերպ ջուր են ածում պրոլետարական հեղափոխության ջրադաշտությունները, վորոնք նպաստում են գյուղացիությանը բանվոր դարաս կարդի ուղղերի և դաշնակիցը գարբնելուն:

2) Գյուղացիությունը բուրժուազիան դեմոկրատական հեղափոխության ժամանակակից պուտական առաջ խոր ընդառնությունից (1905 թ.) մինչև յերկրորդը (փետրվար 1917 թ.) ներառյալ՝ ժամանակամիջոցը: Այս ըրջանի բառը գիծն և հանդիսանում գյուղացիության աղքատպանությունը ինքը բուրժուազիայի աղքացությունից, գյուղացիության հեռանալը կաղետներից, գյուղացիության ջրադաշտը դեպի ստարիատի կողմը, դեպի բոլշևիկների կուսակցության կողմը: Այս ըրջանի պատմությունը կատեսների (լիբերալ բուրժուազիայի) և բուշկեների (պրոլետարիատ) գյուղացիության համար մղած պայքարի պատմությունն ե: Այդ պայքարի ռախորդ վրանք ուղղանքը, վորովհետեւ չորս Դումաների ըրջանն առարկայական գաս ծառայեց գյուղացիության համար, իսկ պատման ամիներեւ կերպով ցույց տվեց գյուղացիությանը, վոր նրանք չեն ստանա կաղետների ձեռքից վոչ հող, վոչ աղքատությունն, վոր ցարն արտօղական կարվածքների կողմն ե, իսկ կատեսները պաշտպանում ենին ցարին, վոր միակ ուժը, վորի ողնությանը կարելի յե հույս տածել, — դա քարզաքարտին բանագույն հատական ցումայի դամար ավարտերով գյուղացիության հեռանալը բուրժուազիայից, ավարտելով լիբերալ բուրժուազիայի մեկուսացումը, վորովհետեւ պատմարզմի տարի ները ցույց տվին ցարից և նրան բուրժուազիան գաշնակիցներից

իսաղաղություն ստանալու հույսերի ամբողջ ապարդյունությունը, ամբողջ խարութիւնությունը։ Առանց դումայական շրջանի ավելառու դասերի պրոլետարիատի հեղեմոնիան անհնարին կլիներ։

Այսպես և ատեղծիւլ բանվորների և գյուղացիների դաշինքը բուրժուատ - դեմոկրատական հեղափոխության մեջ։ Այսպես և ատեղծիւլ պրոլետարիատի հեղեմոնիան (գելեալարությունը) ցարիչ տապալման համար մղված ընդհանուր սրայքարում, հեղեմոնիա, վորը բերել է 1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը։

Այսմուռքի բուրժուական հեղափոխությունները (Անդրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա), ինչպես Հայունի յև, ընթացի են այլ ճանապարհով։ Այնտեղ հեղեմոնիան հեղափոխության մեջ պատկանել է վոչ թե պրոլետարիատին, իորն իր թուլության պատճառով ինքնուրույն քաղաքական ուժ չեր ներկայացնում և չեր ել կարող ներկայացնել, այլ միքերալ բուրժուալիային։ Այնտեղ գյուղացիությունը ճորտառիսկան կարգերից աղաւագուով և տասացել վոչ թե պրոլետարիատի ձեռքով, վորը սակավաթիվ եր և անկարգմակերպ, այլ բուրժուաղյայի ձեռքով։ Այնտեղ գյուղացիությունը հին կարգերի դեմ ընթացել է միքերալ բուրժուազիայի հետ միասին։ Այնտեղ գյուղացիությունը բուրժուաղյայի ոեղերին եր ներկայանում։ Այնտեղ, այդ պատճառով, հեղափոխությունը հանդեցրեց բուրժուաղյայի քաղաքական հայութիւն ահագին ուժեղացմանը։

Ռուսաստանում, ընդհակառակիլի, բուրժուական հեղափոխությունը տվեց ուղղակի հակառակ արդյունքներ։ Հեղափոխությունը Ռուսաստանում հանդեցրեց բուրժուազիայի, վորսկեա քաղաքական ուժի՝ վոչ թե ուժեցամնը, այլ թուրացմանը, նրա քաղաքական ոեղերիների վոչ թե բարձրագաւակմանը, այլ նրա հիմնական ոեղերինի կորսայանը, գյուղացիության կորսայանը։ Բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում առաջին պրանքը մղեց վոչ թե միքերալ բուրժուաղյային, այլ հեղափոխական պրոլետարիատին, համախմբելով նրա շուրջը բաղմանի ինքնուրությունը։

Դրանով եւ իմիջի այլոց բացարկվում է այն փառուր, վոր Ռուսաստանում բուրժուական հեղափոխությունը վերածեց պրոլետարական հեղափոխությանը համեմատաբար կարճ ժամանակամիջություն։ Պրոլետարիատի հեղեմոնիան դեպի պրոլետարիատի դիկտուրական սարման ու անցման աստիճանն եր։

Ինչո՞վ բացատրել այս յուրահասումկ յերևությը ուռասական հեղափոխության մեջ, վորը պրեժեպենտներ չունի Արևմուտքի

բուրժուական հեղափոխությունների պատճենության մեջ։ Վո՞րտեղից և ատացիւլ այդ յուրահատկությունը։

Բացատրմում է դա նրանով, վոր բուրժուական հեղափոխությունը Ռուսաստանում ծավալվել է դատավարագալին սրայքարի ավելի գարզացած պայմաններում, քան Արևմուտքում, վոր ուռասական պրոլետարիատուն այդ ժամանակ կարողացել եր արգելանքնուրույն քաղաքական ուժ գառնալ, այն ինչ լիբերալ բուրժուաղյան՝ վախեցած պրոլետարիատի հեղափոխականությունից, կորցրել եր ամեն մի հեղափոխականության նմանություն (առանձնապես 1905 թ. քասերից հետո) և դաշինք եր կնքել ցարի ու կարմածատերերի հետ ընդդեմ հեղափոխության, լողակամունքների։

Հարկ է ուշադրություն դարձնել հետեւյալ հանգստմանքների վրա, վարենք բնորոշել ին ուռասական բուրժուական հեղափոխության յուրահատկությունը։

ա) Ռուսական արդյունաբերության չափանիքած կոնցենտրացիան հեղափոխության նախորդյակին։ Զայտնի յև, որինակ, վոր Ռուսաստանում 500 հոգուց ավելի թվով բանվորները ունեցող ձեռնարկություններում աշխատում եր բոլոր բանվորների 54 տոկոսը, այն ինչ այնպիսի դարգացած յերկրում, ինչպիսին է Հյուսիսային Ամերիկան, նախարարկություններում աշխատում եր բոլոր բանվորների ընդամենը 33 տոկոսը։ Հաղիկ թե կարիք կա աղաւագուցելու, վոր թեկուզ միայն այս հանգամանքը, այնպիսի հեղափոխական կուսակցության առօկայության պայմաններում, ինչպիսին եր բոլոշեկների կուսակցությունը, նը, Ռուսաստանի բանվոր դատակարգին դարձման է յերկրի քաղաքական կանքը մեծագույն ուժը։

բ) Շահագործման այլանդակ ձեվերը ձեռնարկություններում՝ պլյուս ցարական ապրիչների անսամենիլի վաստիկական կան ոեթիմը, — մի հանգամանք, վորը բանվորների յուրաքանչյուր լուրջ գործարդուլը վարձնում եր ահազին քաղաքական մի ակտ և բանվոր դատակարգին կուսում եր վորսկեա մինչև վերջ հեղափոխական մի ուժի։

գ) Ռուսական բուրժուաղյայի քաղաքական թուրամորթյունը, վորը 1905 թ. հեղափոխությունից հետո վերածվեց ծառամատության ցարիզմի հանդեպ հակա հեղափոխության, վորը բացառություն եր վոչ միայն ուռասական պրոլետարիատի հեղափոխականությամբ, վոր ուռասական բուրժուաղյան նետեց ցարիզմի գիրքը, այլ և այդ բուրժուաղյայի ուղղացի կարիքածությամբ պետական պատվերերից։

դ) Ճորտառիրական կարգերի ամենաայլանդակ և ամենա

աստելի մնացորդներէ առկայությունու գյուղում, վորոնք լրացնում եյին կալվածառիրոջ ամենազորությամբ, — մի հանգամանք, վորը զյուղացիությանը ննան և հեղափոխության դիրք:

յ) Յարիզմը, վոր ճնշում եր ամեն մի կենդանի բան և իր կամացականությամբ խորացնում կապիտալիստի և կարլվածատիրոջ ճնշումը, — մի հանգամանք, վոր բանվորների և գյուղացիների պայքարը միացնում. եր մի միամանկան հեղափոխական հոսանքի մեջ:

զ) Իմպերիալիստական պատերազմը, վոր Ռուսաստանի քաղաքական կյանքի բոլոր այս հակասությունները միաձույն և խորը հեղափոխական զդատամի մեջ և հեղափոխությանը տվել և գրոհի չտեսնված ուժ:

Ո՞ւր պետք ե դիմեր գյուղացիությունն այդպիսի պայմաններում: Ո՞ւմ մոռ պետք ե նա պաշտպանություն մինտուր կալվածատիրոջ ամենազորության դեմ, ցարի կամայականության դեմ, կորհանարար պատերազմի դեմ, վորը քայքայել եր հրատասությունը: Լիբերալ բուրժուազիայի մոտ: Բայց նա թշնամի յե, — արդ մասին խոտում եր բոլոր չորս Դումաների յերկարացյաց վորդը: Եսերների՞ մոտ: Եսերները, ինարկե, «ամելի բավ» եյին կազմաներից, և նրանք «Հարմար» ծրագիրը ունեյին համարյա գյուղացիական, բայց ի՞նչ կարող են տալ եռերները, յեթե նրանք մտածում են հենվել միմիայն գյուղացիների վրա և յեթե նրանք մտույլ են քաղաքում, ուր նախ և առաջ իր ուժերն եր ստանում հակառակորդը: Վորտե՞ղ ե այն նոր ուժը, վորը վոչ մի քանի առաջ կանոն չի առնի վոչ գյուղում, վոչ ել քաղաքում, վորը համարձակիրեն առաջին շարքերում պայքարի կդնացարի և կալվածատիրոջ դեմ, վորը կողնի գյուղացիությանը դուրս դալու առրկությունից, հոգազրկությունից, ճնշումից, պատերազմից: Ընդհանրապես յեղել ե արդյոք այդպիսի մի ուժ Ռուսաստանում: Այս, յեղել ե: Դա ոռուական պրոլետարիատն եր, վորը ցույց եր առվել իր ուժը, մինչև վերջ պայքարելու իր կարողությունը, իր համարձակությունը, իր հեղափոխականությունը դեռ 1905 թվին:

Ամենայն դեպս, ուրիշ այլպիսի ուժ չի յեղել, և նրան վոչ մի տեղից չեր կարելի ստանալ:

Ահա թե ինչու գյուղացիությունը, հեղանարով կազետներից և հարեւով եռերներին, հանգեց այն յեղրակացության, վոր անհուաժեցաւ եր ինթարիին հեղափոխության ամպիսի առնական առաջնորդի զնի կամարությանը, վորպիսին եռ ոռուական պրոլետարիատը:

Այդպիսին են այն հանգամանքները, վորոնք բնորոշել են ռուսական բուրժուական հեղափոխության առանձնահատկությունը:

3) Գյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ: Այս ըշանն ընդդրկում և ֆետրվարյան հեղափոխությունից (1917 թ.) մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը (1917 թ.) ընկած ժամանակաշրջանը: Այս համեմատարար յերկար շրջան չեղափոխական բարող են ամսաների քաղաքական լուսավորության և հեղափոխական դաստիարակության անսակետից, համարձակուրեն կարող են դասավել սովորական սահմանադրական զարգացման ամբողջ սահմանայինկների հետ մի տախտակի վրա, վորովհետեւ դրսնք նշանակում են հեղափոխության ուժ ամիսները: Այս շրջանի բնորոշները ե գյուղացիության հետագա հեղափոխական անսակետից, գյուղացիության հեռացումն եներներից, գյուղացիության նոր շրջադարձը դեսպի ուղղակի համախմբումն պղորհատարիատի չուրջը, վորպիս միակ մինչև վերջ հեղափոխական ուժի, վորն ընդունակ է յերկիրը սահմանական պայմություն: Այս շրջանի պատմությունն եներների (մանր՝ բուրժուական դեմոկրատիա) և բոլշևիկների (պրոլետարական դեմոկրատիա) գյուղացիության համար, գյուղացիության մեծամասնությունը նվաճելու համար մղած պայքարի պատմությունն ե: Այս պայքարի բախուը վճռել են կոալիցիոն շրջանը, կերենչչինայի շրջանը, եսերների և մենշևիկների հրաժարումը կալվածատիրական հողերի կոնֆիսկացիայից, եսերների և մենշևիկների պայքարը պատերազմը շարունակելու համար, հունիսյան հարձակումը Փրոնտում, մահապատիժը զինվորների համար, կորնիլովի ապստամբությունը:

Եթե առաջ, նախընթաց շրջանում, հեղափոխության հիմնական հարցը հանդիսացել եր ցարի և կալվածատիրական իշխանության տապալումը, ապա հիմա, հետ և փետրվարյան հեղափոխության շրջանում, յերբ ցարն արդեն չկար, իսկ յերջացող պատերազմը մինչև վերջ քայքայել եր յերկրի տնտեսությունը, քայքայելով գյուղացիությունը վերջնականապես, — հեղափոխության հիմնական հարցը գարձավ պատերազմը վերացնելու հարցը: Ծանրության կենտրոնը զուտ ներքին բնույթի կրող հարցերից տեղափոխվեց դեսպի հիմնական հարցը — պատերազմի մասին: «Վերջացնել պատերազմը», «ըլուրս գալ պատերազմից» — այս եր ուժապար յեղած յերկրի և, ամենից առաջ, գյուղացիության ընդհանուր աղաղակը:

Բայց, պատերազմից դուրս գալու համար անհրաժեշտ եր տապալիք ժամանակավոր կառավարությունը, անհրաժեշտ եր տապալիք բուրժուազիայի իշխանությունը, անհրաժեշտ եր տապալիք ևս-երների և մենչեւիների իշխանությունը, վորովհետեւ նրանք և միայն նրանք եյին յերկարածում պատերազմը մինչև «Հաղթական վախճանը»: Պատերազմից դուրս գալու այլ յելք չկար գործ նականում, քան բուրժուազիայի տապալումը:

Դա նոր հեղափոխություն եր, պրոլետարիան հեղափոխություն, վորովհետեւ նա իշխանությունից գեն չպրտեց իմաստերիալիստական բուրժուազիայի վերջին, ծայրահեղ ձախ Փրակցիային, ես-երների և մենչեւիների կուսակցությանը, նրա համար, վրապեսզի ստեղծի նոր, պրոլետարիան իշխանություն, իսր հուրժությունի իշխանություն, վորպետի իշխանության գլուխ զնի հեղափոխության պրոլետարիատի կուսակցությանը, բոլշևիկների կուսակցությանը, հեղափոխական պայքարի կուսակցության ընտրեամբ խմաբերիստական պատերազմի հանուն դեմքի բարտական խաղաղության: Գյուղացիության մեծամասնությունը պաշտպանեց բորբոքարի պայքարը՝ հանուն խաղաղության, հանուն խոր հուրժուների իշխանության:

Գյուղացիության համար այլ յելք չկար: Այլ յելք չեր ել կարող լինել:

Այսինքն, կերենչյնայի շրջանը դյուլացիության աշխատավորական մատաների համար մեծագույն առարկայական դաս յի դավ, վորովհետեւ նա ակնբախ կերպով ցույց տվեց, վոր ես-երների և մենչեւիների իշխանության ժամանակ յերկիրը պատերազմից չի կարող դուրս գալ, դյուղացիները չեն տեսնի վոչ հոլ, վոչ ել աղատություն, վոր մենչեւիներն ու ես-երները կա դեսներից տարբերվում են միայն քաղցր ճառերով և կեղծ խոս տումներով, իսկ գործնականում կիրառում են նույն այն իմպերիալիստական, կաղնատական քաղաքականությունը, վոր միակ իշխանությունը, վորը ընդունակ է յերկիրը ճանապարհի վրա դուրս բերել, — կարող ել լինել միայն խորհուրդների իշխանությունը: Պատերազմի հետագա յերկարածումը միայն հաստատեց այլ դասի ճշությունը, արագացրեց հեղափոխությունը և դյուղացիների ու զինվորների միլիոնավոր մասսաներին մղեց պրոլետարիական հեղափոխության չուրջն ուղղակի համախմբվելու ուղին: Ես-երների և մենչեւիների մեկուսացումը դարձավ անխորստակելի փառ: Առանց կուալիցիոն շրջանի ակնառու դասերի պրոլետարիատի դիկտատորան անհնարին կլիներ:

Այսպիսին են այն հանգամանքները, վորոնք հետև հեղափոխությունը:

բուրժուազիան հեղափոխության սկզբեատարական հեղափոխության վերաճման պրոցեսը:

Այսպես ե կազմավորվել պրուետարիատի դիկտատորան Ռուսաստանում:

4) Գյուղացիությունը խորհրդային իշխանության ամրապնդության վերաճման պրոցեսը հեթե առաջ, հեղափոխության առաջին շրջանում, ինդիբը վիսավորապես վերաբերում եր ցարիզմի տապալմանը, իսկ հետագայում, Փետրվարյան հեղափոխությունից հետո, հարցը վերաբերում եր, առենից առաջ, իմաստերավայրական պատերազմից դուրս դաշտում՝ բուրժուազիայի տապալման միջոցով, առաջ հիմա, քաղաքացիական պատերազմի վերացումից և խորհրդային իշխանության ամրապնդությունից հետո, — առաջին պլանի վրա դուրս յեկան տնտեսական շինարարության հարցերը: Ուժեղացնել և զարգացնել նաշխոնալիզացիայի յենթարկված ինդուստրիան. դրա համար՝ կապել ինդուստրիան գյուղացիական տնտեսության հետ՝ առևտորի միջոցով, վորը կանոնավորվում և պետության կողմէց. պարենամասնատրումը փոխարինել պարեն հարկով՝ այն հաշվով, վորպեսզի հետո, աստիճանաբար վորքաց նելով պարենհարկի չափերը՝ հանգեցնել գործը ինդուստրիայի արտադրանքները գյուղական տնտեսության մթերքներով փոխանակման. աշխուժացնել առևտորը և զարգացնել կրոպերացիան՝ ներգրավելով այս վերջինիս մէջ միջնաւայրը գյուղացիությունը, — ահա թե ինչպես և նկարագրել կենինը տնտեսական շինարարության հերթական խորհրդական սոցիալիստական եկոնոմիկայի Փունդամենտի կառուցման անապարհին:

Առաջ են, թե այս խորհրդը կարող է ուժից վեր լինել այնպիսի գյուղացիական յերկիրի համար, վորպիսին և Ռուսաստանը: Մի քանի սկզբաների խոսում են նույնիսկ այն մասին, թե այդ պարզապես առտօնիական է, անիրազործելի, վորովհետեւ գյուղացիությունը գյուղացիություն է, — նա բաղկացած է մանր արտադրողներից, և նա այդ պատճառով չի կարող ողսու գործի սոցիալիստական արտադրության Փունդամենտի կազմակերպման համար:

Բայց սկզբաների սխալվում են, վորովհետեւ նրանք հաշվի չեն առնում մի քանի հանգամանքներ, վորոնք տվյալ զետքում վճռական նշանակություն ունեն: Քննենք դրանցից գիմաստրոները:

Առաջին: Զի կարելի խորհրդային իշխանության գյուղացիությանը շփոթել Սրմեմուաքի գյուղացիության հետ: Այն գյուղացիությունը, վորն անցել և յերեք հեղափոխությունների դպրու

ըլ, պայքարել ե ցարի և քուրժուական իշխանության գեմ պղովի ասրիատի հետ միասին և պրոլետարիատի դիմավորությամբ, գյուղացիություն, վորը հողը և խաղաղությունն ստացել ե սլրա լետարական հեղափոխության ձեռքով և այդ պատճառով դարձել ե պրոլետարիատի ռեզերվը, — այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուատ կան հեղափոխության ժամանակ պայքարել ե լիբերալ բուրժուատ զիայի դիմավորությամբ, վորը հողն ստացել ե այդ բուրժուատ զիայի ձեռքով և այդ պատճառով դարձել ե բուրժուաղիայի ռե դերվը: Հարդիք թե կարեք կա ապացուցելու, վոր խորհրդային գյուղացիությունը, վորը տոլորել ե զնահատել քաղաքական ըն կերասկությունն ու քաղաքական համագործակցությունը պրոլետարիատի հետ և իր ազատությամբ պարտական ե այդ ընկերակ ցությանն ու այդ համագործունեյությանը, — չի կարող բառ ցառիկ բարենպատ մատերիալ չի ինել անտեսական համագործակ ցության համար պրոլետարիատի հետ:

Ենդելսն ասել ե, թե «քաղաքական իշխանության նվաճումը սոցիալիստական կուսակցության կողմից մոտիկ արագայի գործ ե դարձել», վոր «այն նվաճելու համար կուսակցությունը կախ պետք ե քաղաքից գյուղ գնա և ուժեղ գառնա գյուղում» (ան ենդելսի «Գյուղացիական հարցը»): Նա այս մասին գրել ե անց յալ տարի 90-ական թվականներին, նկատի ունենալով արևմտյան գյուղացիությունը: Հա՞րի ե արդյոք ապացուցել, վոր ուստա կան կոմունիստները, վորոնք այդ տեսակետից ահազին աշխատանք են կատարել յերեք հեղափոխությունների ընթացքում: Կարողացել են արդեն գյուղում իրենց համար ստեղծել այնպիսի աղջեցություն և այնպիսի հենարան, վորոնց մասին մեր արե ժաման ընկերները յերարել անդամ չեն համարձակվում: Ի՞նչպես կարելի յե բացառել, վոր այս հանգամանքը չի կարող արմատա պես չեցատցնել անտեսական համագործակցության կարգավոր ման գործը Ռուսաստանի բանվարդի մասին:

Սկեպտիկները պնդում են մանը գյուղացիների մասին, վոր պես սոցիալիստական շնարարության հետ անհամատեղելի Փակ տորի մասին: Բայց լսեցեք, թե ինչ է ասում Ենդելսը Արևմուտքի մանը գյուղացիների մասին.

«Մենք վճռականապես մանը գյուղացու կողմն ենք կանգ նում: մենք բոլոր հնարավոր յեղածը կանենք, վորպեսզի նը բան ափելի տանելի լինի ապրելը, վորպեսզի հեշտցնենք նը բան անցումն ընկերակցության այն դեպքում, յեթե նա

կը հայր այդ անել: իսկ այն գեղաքում, յերբ նա դեռ ի միհա կի չի լինի ընդունել այդ վճիրը, մենք կաշխատենք ըստ հնա բավորին նրան ավելի շատ ժամանակ տալ մտածելու այդ մա սին իր մի կտոր հողի վրա: Մենք այդպես կիմարվենք վոչ միայն այն պատճառով, վոր հնարավոր ենք համարում ինք նուրույն կերպով աշխատող մանր գյուղացու անցումը մեր կողմը, այլ և անմիջական կուսակցական շահերից զրագած: Ինչքան ավելի շատ կլինի այն գյուղացիների թիվը վո րոնց մենք թույլ չենք տա համեմելու մինչև պրոլետարների վիճակը և վորոնց մեր մեր կողմը կիրավինք դեռ վորպես գյուղացիները, — այնքան ավելի արագ և հեշտ կերպով կկա տարիվ հասարակական կերամիկությունը: Մեզ համար ան ողուստ կլիներ մարտել այդ վերափոխությանը մինչև այն ժամանակ, յերբ կապիտալիստական արտադրությունն ամե նուրեք կլարդանամ մինչև իր ծայրահետ հետևանքները, յերբ և՝ վերջին մանր արհեստավորը և՝ վերջին մանր գյուղացին խոշոր կապիտալիստական արտադրության գոհը կդառնան: Այս նյութական զոհողությունները, վոր հասարակական մի ջոցներից հարկ կլինի անել այդ իմաստով հոգուտ գյուղա ցիներին, կապիտալիստական եկոնոմիկայի տեսակետից կա բող են թվալ դեմ շղթաված փողեր, իսկ, այնինչ, դա — կապիտալի հիանալի գործածությունն ե, վորովհետեւ նրանք կտնտեսնեն գուցե տան անզամ ավելի մեծ դումարներ ամ քողջությամբ վերցրած հասարակական վերափոխության հա մար կատարվելիք ծախսերի ժամանակի: Այս իմաստով մենք կարող ենք, հետեւարար, շատ առատաձեռն վինել գյուղացիների վերաբերմամբ» (ան նույն տեղը):

Այսպես և ասել Ենդելսը՝ նկատի տնենալով արևմտյան գյու ղացիությունը: Բայց մի՞թե պարզ չե, վոր Ենդելսի ասածը վոչ մի տեղ այսպես հեշտությամբ և լիմակատարությամբ չի կարող իրագործվել, ինչպես պրոլետարիատի գիկուստուրայի յերկորում: Միթե պարզ չե, վոր միայն Խորհրդային Ռուսաստանում կա տող են կյանքում կիրառվել հենց հիմա և ամբողջությամբ թե՝ «ինքնուրույն կերպով աշխատող մանր գյուղացու անցումը մեր կողմը», թե՝ դրա համար անհրաժեշտ նյութական զոհողությունները, և թե՝ դրա համար հարկավոր «առատաձեռնու թյունը գյուղացիների վերաբերմամբ», վոր այդ և նրանց նման միջոցները հոգուտ գյուղացիներին արդեն կիրառվում են Ռու ստանամում: Ինչպես կարելի յե բացառել, վոր այս հանգաման

քը, իր հերթին, պետք եւ հեշտացնի և առաջ չարժի խորհրդացին յերկրի տնտեսական շինարարության գործը:

Յերկրորդ: Զի կարելի չփոթել Ռուսաստանի գյուղական տնտեսության հետ: Այստեղ գյուղական տնտեսության զարգացումն ընթանում է կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խորը շերտավոր ման իրադրության մեջ, խոչըր կարգածներով և մասնավոր - կապիտալիստական լատիֆունդիսմերով մի բենեռում, պատուիքիզմով, ազգատությամբ և վարձու ստրկությամբ — մյուսում: Այստեղ անկումն ու քայլացումն այդ պատճառով միանդամայն քնական են: Այդպես չի Ռուսաստանում: Մեղ մոտ գյուղական տնտեսության զարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղիով թեկուզ և նրա համար, վոր խորհրդացին իշխանության առկայությունը և արտադրության հիմնական գործիքների ու միջոցների նաշխնալիքացիան թույլ չեն տալիս այդպիսի զարգացում: Ռուսաստանում գյուղական տնտեսության զարգացումը պետք և ընթանա այլ ուղիով, միլիոնավոր մանր ու միջակ գյուղացիության կոռուպերացման ուղիով, գյուղում մասսայական կոռուպերացիայի զարգացման ուղիով, վորը պաշտպանվում է պետության կողմից արտօնյալ վարձավորման կարգով: Լենինը կոռուպերացիայի մասին զրած հողվածներում ճշշտ և մատնանշել, վոր գյուղական տնտեսության զարգացումը մեղ մոտ պետք և ընթանա նոր ուղիով, կոռուպերացիայի միջոցով գյուղացիների մեծամասնությունը սոցիալիստական շինարարության մեջ ներդրամվելու ուղիով, գյուղական տնտեսության մեջ՝ նախ սպառման քնագավառում, իսկ ապա գյուղական տնտեսության մթերքների բնագավառում, իսկ առաջ գյուղական տնտեսության մթերքների արտադրության բնագավառումը կողեկտիվոմի տկրումների առ արհանական արմատացման ուղիով:

Չափազանց հետաքրքիր են այս տեսակետից մի քանի նոր յերեսութեներ գյուղում գյուղանատեսական կոռուպերացիայի աշխատանքի կապակցությամբ: Հայտնի յեւ, վոր Սելսկոսոյուղի ներսում առաջացել են նոր խոչըր կազմակերպություններ ըստ գյուղական տնտեսության ճյուղերի, — կտավատի, գետնախճանքորդի, յուղի և այլնի գծով, վորոնք մեծ ասղաղա ունեն: Դրանցից, որինակ, Լընոցենտրը միացնում է կտավատ մշակող գյուղացիների արտադրական ընկերությունների մի ամբողջ ցանց: Լընոցենտրը զբաղվում է նրանով, վոր գյուղացիներին մատակարում է սերմեր և արտադրության գործիքներ, հետո նույն այդ գյուղացիներից զնում է կտավատի ամբողջ արտադրանքը, ծարուում է այն մասսայական մասշտարով շուկայում:

ապահովում եւ գյուղացիների մասնակցությունը շահույթներում է, այդպիսով, գյուղացիական տնտեսությունը Սելսկոսոյուղի միջոցով կապում պետական արդյունաբերության հետ: Ինչպէս անվանել արտադրության կազմակերպման այդպիսի ձեր: Դա, իմ կարծիքով, խորը պետական - սոցիալիստական արտադրության տնային սիստեմն է գյուղական տնտեսության արագարիղում: Յես այստեղ խոսում եմ պետական - սոցիալիստական արտադրության տնային սիստեմի մասին՝ կազմիտալիզմի տնային սիստեմի անալոգիայով, առենք, տեքստիլ արտադրության արագարիղում, վորտեղ տնայնադրները, կազմիտալիստից ստանալու հումուրով ու գործիքներ և տալով նրան ամբողջ իրենց արտադրանքը, փաստորեն համագրածում եյին կիսավարձու բանվոր ներ տանը: Այս բազմաթիվ ցուցանիշներից մեկն է այն բանի, թե ի՞նչ ուղիով պետք է ընթանա մեղ մոտ գյուղական տնտեսության զարգացումը: Յես այստեղ ել չեմ խոսում նման տեսակի մյուս ցուցանիշների մասին՝ գյուղական տնտեսության մյուս ներմերի վերաբերյալ:

Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր գյուղացիության ահարին մեծամասնությունը սիրով կեանգնի զարգացման այս նոր ուղղու վրա՝ գեն չպատերով մասնավոր - կազմիտալիստական բատիֆունդիաների և վարձու ստրկության ուղին, ազգատության ու քայլացման ուղին:

Ահա թե ի՞նչ է ասում Լենինը մեր գյուղական տնտեսության գարգացման ուղիների մասին:

«Պետության իշխանության արտադրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այդ պրոլետարիատի գաշնչքը բաղմաթիվ միլիոնավոր մանր և մանրագույն դյուղացիների հետ, այդ պրոլետարիատի համար ղեկավարման ապահովութը դյուղացիության նկատմամբ և այլն, — մի՞թե այս ամենը չե, ինչ պետք է նրա համար, վորպեսդի կոռուպերացիայից, միմիայն կոռուպերացիայից, վորը մենք առաջ անարդ գում եյինք վորպես չարչիսկանի, և վորը վորու կողմով երավունք ունինք հիմաս անարդերու ՆեՊ-ի ժամանակի նույն պես, մի՞թե այս բոլորն անհրաժեշտ յեղած չե՝ լիակատար առցիալիստական հասարակություն կառուցելու համար: Այս գեռ սոցիալիստական հասարակության կոռուպտումը չե, բայց դա այն ամենն է, ինչ անհրաժեշտ է և բանական այդ կառուցման համար» (տես հ. 27-րդ, եջ 392):

Ապա խոսելով կոռուպերացիային, Փինանսարկան և այլ ոժան-

դակության անհրաժեշտության մասին, վրոլետարիատի դիմումը համարված է ամենաքաղաքացիության կազմակերպիչ ման նոր սկզբունքի՝ և նոր «Հասարակակարգի» — Լենինը շարունակում ե.

«Յուրաքանչյուր հասարակակարգ ծագում և միայն վուրուց դաստիարակի ֆինանսական սրաշտապահության սրայմանն առում։ Կարիք չկա հիշել այն հարյուրավոր և հարյուրավոր միջին ուղղին ուղղին մասին, վոր նոտուց «աղջան» կապիտալից մի ծնունդը։ Հիմա մենք պետք եւ դիտակցենք և լենսագործնենք գործնականում, վոր ներկայումս այն հաւաքակակապը, որ, վորին մենք պետք եւ պաշտպանենք գերսովորականից, կոռպերատիվային հասարակակարգություն եւ։ Բայց այն պաշտպանել եւ պետք խոսքիս խոկանան խմանում, այսինքն՝ այդ պաշտպանության տակ բարձրական չեւ հասկանալ ամեն մի կոռպերատիվ շրջանառության պաշտպանություն, — այդ պաշտպանության տակ պետք եւ հասկանալ այսպիսի կոռպերի շրջանառության պաշտպանությունը, վորի մեջ իսկապես մասնակցում են ազգաբնակչության խոկանան մասան ները» (տես նույն տեղը, եջ 393)։

Ինչի՞ մասին են խոսում այս բոլոր հանդամնելիրը։  
Այն մասին, վոր սկեպտիկներն իրավացի չեն։

Այն մասին, վոր իրավացի յեւ լենինիցմը, վորը գյուղացիության աշխատավոր մասսաներին գիտում և վորպես պրոլետարիատի ուղղերվի։

Այն մասին, վոր իշխանության գլուխ կանգնած պրոլետարիատը կարող եւ պետք եւ ուղարկութիւնը այդ ուղղերին նոր համար, վորպեսողի միացնի ինդուստրիան գյուղական տնտեսության հետ, բարձրացնի սոցիալիստական շինարարությունը և պրոլետարիատի գիտատուրայի տակ հաստատի այն անհրաժեշտ Փուն գամենուը, տռանց վորի անհնար և անցումը գեպի սոցիալիստական ելունութիւն։

(Ստալին — «Լենինիդմ ի հարցերը» 10-րդ հրատ., եջ 33-43)։

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿ. ՅԱՆ-ՍԿՈՒՆ)

Բնկ. Յան-սկուն։

Ձեր նամակն ստացա, իհարկե, իր ժամանակին։ Պատասխանում եմ վորուց ուշացումով, վորի համար ներողություն եմ խնդրում։

1) Լենինն ասում ե, վոր «ամեն մի հեղափոխության ամենագլխավոր հարցը պետական իշխանության հարցն ե» (տես հ. 26-րդ, եջ 142)։ Թե վոր դասակարգի կամ վոր դասակարգերի ձեռքումն ե կենտրոնացած իշխանությունը, թե վոր դասակարգը կամ վոր դասակարգերը պետք ե տապարվեն, վոր դասակարգը կամ վոր դասակարգերը պետք ե վերցնեն իշխանությունը, — սրանում ե «ամեն մի հեղափոխության ամենագլխավոր հարցը»։

Կուսակցության հիմնական ստրատեգիական լոգունողները, վորոնք պահում են իրենց ուժը հեղափոխության այս կամ այն ետապի ամբողջ շրջանի ընթացքում, չեն կարող հիմնական լուցունդներ կոչվել, յեթե նրանք ամբողջությամբ և լիովին չեն հենվում Լենինի այս կարդինալ թեզիսի վրա։ Հիմնական լուցունդները կարող են ճշգրիտ լինել միայն այն դեպքում, յեթե նրանք կառուցվում են դասակարգային ուժերի մարքսիստական անալիզի բաղադրի վրա, յեթե նրանք նախագծում են դասակարգային պայքարի ֆրոնտում հեղափոխական ուժերի դասավորման ճիշտ սիստեմ, յեթե նրանք հեղափոխությանը անհնարինության առնելի համար հաջող գործություն ունենալու համար կատարելու համար։



ևն տեղի ունենալ պարտություններ ու նահանջներ, անհաջողություններ և առանձին տակտիկական սխալներ, բայց այդ դեռ չեն նշանակում, թե հիմնական ստրատեգիական ըողունդը ճիշտ չեն: Այսպէս, որինակ, մեր հեղափոխության առաջին ետարրում հիմնական լոգունդը — «ամբողջ գյուղացիության հետ միասին, նաև կան լոգունդը» — ամբողջ գյուղացիության հեղուստաղիայի չեղուստաղիան ցարի և կարվածատերերի դեմ՝ բուրժուազիայի չեղուստաղիան ցարի և կարվածատերերում, հանուն լուրժուա — դեմ ոկրատական հեղուստաղիայի հաղթանակի» — միանդամայն ճիշտ եր, չնայած, վոր խության հաղթանակի» — միանդամայն ճիշտ եր, չնայած, վոր 1905 թվականի հեղափոխությունը պարտություն կրեց:

Հետևապես, չի կարելի չփոթել կուսակցության հիմնական լոգունդի հարցը հեղափոխության պարտությունների ու անհաղունդի հարցի հետ՝ նրա դարձացման այս կամ այն առջանանում:

Կարող եք պատահել, վոր հեղափոխության ընթացքում կուսակցության հիմնական լոգունդն արդեն հանգեցրել են հինգամակարդությունը կամ հինգ դասակարգի լշանության առաջարկմանը, բայց այդ լոգունդից բախող՝ հեղափոխության մի չարք երական ըայց այդ լոգունդից բախող՝ կամ նրանց իրադորձուականը չեն տատցել, կամ նրանց իրադորձուականը չեն տատցել, կամ նրանց մի ամբողջ ժամանակաշրջան յերկարածդպերի եր, կամ նրանց մը մի ամբողջ ժամանակաշրջան յերկարածդպերի եր, կամ ամամար նոր հեղափոխություն և պահանջումը, բայց այդ դեռ չի նշանակում, թե հիմնական լոգունդը ճիշտ չեն: Այսպես, որինակ, 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունը կարվածատերերին, բայց չբերեց թյունը տապահեց ցարիզմին և կարվածատերերին, բայց չբերեց թյունը տապահեց ցարիզմին և կարվածատերերին կոնֆիսկացիայի իրադորձմանը և այսպիս ամբողջ այդ դեռ չի նշանակում, թե մեր հիմնական լոգունդը լըն, բայց այդ դեռ չի նշանակում, թե մեր հիմնական լոգունդը ճիշտ չեր: Կամ դեռ՝ չուկանական հեղափոխությունն իրագործեց բուրժուազիայի տապահումը և իշխանության պրոլետարիատի ճեղքները, բայց իսկունք չանգեցրեց՝ ա) բուրժուական հեղափոխությունը մինչեւ յերջ հասցնելուն, ընդհանրապես, և բ) կուրտակության մեկուսաց մանը դրույում, մասնավորապես, յերկարածդելով այդ գործը վորուշ ժամանակաշրջանով, բայց այդ դեռ չի նշանակում, թե մեր հիմնական լոգունդը հեղափոխության յերկրորդ ետարրում՝ «չըսպոր գյուղացիության հետ միասին, ընդդեմ կազիտալիզմի քաղաքում և գյուղում՝ միջակ գյուղացիության չեղուստաղիան պայմաններում, հանում պըրուխտարիատի իշխանության» ճիշտ չեր:

Հետևապես, չի կարելի չփոթել կուսակցության հիմնական լոգունդի հարցը՝ այդ լոգունդից բախող այս կամ այն պահանջերի կենակառակարտի և ճեկերի հարցի հետ:

Այժմ պատճառով մեր կուսակցության ստրատեգիական լոգունդները չի կարելի զնահաստել վո՞չ այս կամ այն ըշանում հետափոխական շարժման եպիզոդիկ հաջողությունների կամ պարագությունների տեսակետից, վո՞չ ել, առավել ևս, այդ լոգունդներից բղիսող այս կամ այն պահանջների իրագործման ժամկետ ների և ճեկերի տեսակետից: Կուսակցության ստրատեգիական լոգունդները կարող են զնահաստվել միայն դասակարգային ուժերի մարքսիստական անալիզի և հեղափոխության հաղթանակի համար, իշխանությունը նոր դասակարգի ճեռքում կենարունացնելու համար պայքարի Փրոնտում հեղափոխության ուժերի ճիշտ դասակարգման տեսակետից:

Զեր սխալը, ընկ, Յան-սկի, կայանում և նրանում, վոր դուք գանց եք առել այս կարելուածույն մեթոդովիական հարցը կամ չափակացել այն:

## 2) Դուք ճեր նամակում դրում եք.

«Ճիշտ եք արդյոք այն պնդումը, թե մենք ամբողջ գյուղացիության հետ դաշներ կապած ընթացել ենք միայն մինչև Հոկտեմբերը: Վո՞չ, ճիշտ չեն: «Դաշնաք ամբողջ գյուղացիության հետ» լոգունդը իրական եր մինչև Հոկտեմբերը, Հոկտեմբերի մոմենտին և Հոկտեմբերից հետո առաջին շրջանում, վորքանով վոր ամբողջ գյուղացիությունը շահագրրգոված եր բուրժուազիան հեղափոխությունը մինչև վերջ ամարտություն»:

Սապիսով, այս ցիտատից դուրս եք գալիք, վոր կուսակցության ստրատեգիական լոգունդը հեղափոխության առաջին ետապի ընթացքում (1905 թ. — փետրվար 1917 թ.), յերբ գործը վերաբերում եր ցարական — կալվածատիրական իշխանության տապահմանը և պրոլետարիատի ու գյուղացիության դիմուտուրայի հաստատմանը, չեր տարբերվում հեղափոխության յերկրարդ ետապի (փետրվար 1917 թ. — հոկտեմբեր 1917 թ.) ստրատեգիական լոգունդից, յերբ գործը վերաբերում եր բուրժուազիական գյուղացի իշխանության տապահմանը և պրոլետարիատի դիմուտուրայի հաստատմանը: Դուք բացասաւ եք, հետևապես, բուրժուազիական գյուղացի իշխանության հեղափոխության և պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխության միջև յեղած հիմնական տաք բերությունը: Իսկ դուք այդ սխալն անում եք նրա համար, վոր չեք ուզում, ըստ յերեւոյթին հասկանալ, այն հասարակ բանը, վոր ստրատեգիական լոգունդի հիմնական թեման հանդիսանում է իշխանության տվյալ ետարրում, այն հարցը, թե վո՞ր դասակարգն ետապահը և վոր դասակարգի ճեռքն ետապահը:

իսանությունը։ Հաղիկ թէ կարիք կա ապացուցելու, վոր դուք  
այստեղ արմատավես անիբավացի յեք։

Դուք ասում եք, թէ Հոկտեմբերի մոմենտին և Հոկտեմբերից հետո առաջն շրջանում մենք անց ենք կացրել «լաշինք ամբողջ գյուղացիության հետ» լողունգը, վորքանով վոր բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջ հասցնելում շահագրրդ գոված եր ամբողջ գյուղացիությունը։ Բայց ո՞վ ե ասել ձեզ, թէ Հոկտեմբերյան հեղաշրջումը և Հոկտեմբերյան հեղափոխությունը սպառվել եյին կամ իրենց հիմնական խնդիրն եյին դրել բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջ հասցնելը։ Վ՞ո՞ր տեղից եք վերցրել դուք այդ։ Մի՞թե բուրժուաղիայի իշխանության տապալումը և պրոլետարիատի դիկտուարքայի հաստատուած մը կարելի յե տեղափորել բուրժուական հեղափոխության շրջադ նակներում։ Մի՞թե պրոլետարիատի դիկտուարքայի նվաճումը բուրժուական հեղափոխության շրջանավճերից դուրս գար չե։ Ի՞նչպես կարելի յե հաստատել, թէ կուրակները (չե՞ վոր նույն պես գյուղացիներ են) կարող եյին պաշտպանել բուրժուաղիայի տապալումը և իշխանության անցումը պրոլետարիատին։ Ի՞նչ պես կարելի յե բացառել, վոր հողի հացիոնալիզացիայի մասին, հողի մասնավոր տեխականության վերացման, հողի առուծախի արգելման և այնի մասին յեղած դեկրետը, չնայած նրան, վոր չե կարող սոցիալիստական դեկրետ համարվել, անց ե կացվել մեզ մոտ կուրակության դեմ մղված պայքարում, այլ վոչ թէ նրա հետ դաշնակցած։ Ի՞նչպես կարելի յե հաստատել, թէ կուրակները (նույնպես գյուղացիներ) կարող եյին պաշտպանել խոր հըրդային իշխանության դեկրետը՝ Փարբիկաների, գործարանների, յերկաթզերի, բանկերի և այլնի եսքարուպրիացիայի մասին կամ պրոլետարիատի լորունգը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու մասին։ Ի՞նչ պես կարելի յե հաստատել, թէ իմինականը Հոկտեմբերյում վոչ թէ այս և դրա նման ակտերն են, վոչ թէ բուրժուաղիայի տապալումը և պրոլետարիատի դիկտուարքայի հաստատումն ե, այլ բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելն ե։

Անվիճելի յե, վոր Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր ինտիբուներից մեկը բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջ հասցնելն եր, վոր առանց Հոկտեմբերյան հեղափոխության նա չեր կարող մինչեւ վերջ հասցվել, ինչպես նաև ինքը Հոկտեմբերյան հեղափոխությունն ել չեր կարող ամբաղջվել առանց բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը վերջ հասցնելը, և այն վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելն ե։

Ինց բուրժուական հեղափոխությունը, նա պետք ե համակրանք գտնել բոլոր գյուղացիների կողմից։ Այս բոլորն անմիջապես ինքայց այս հիման վրա մի՞թե կարելի յե հաստատել, վոր բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջ հասցնելը վոչ թէ նրա նկայի բղանող յերեսույթ եր Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում, այլ նրա եյությունը կամ նրա հիմնարկան նպատակը։ Իսկ ի՞նչ յեղալ ձեզ մոտ Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր նպատակը — բուրժուաղիայի իշխանության տապալումը, պրոլետարիատի դիկտուարքայի հաստատուած մը, իմպերիալիստական պատերազմը վերածելը, կապատավորական բաղադրացիան պատերազմի վերածելը, կապատավորական բաղադրացիան և այլն։ Յեկամ յեթե ստրատեգիան լողունդի դիմավոր թեման հանդիսանում է ամեն մի հեղափոխության հիմնարկան հարցը, այսինքն՝ իշխանության մի դարսակարգի ձեռքից մյուս դասակարգի ձեռքն անցնելու հարցը, ասպա սրանից պարզ չե արդյոք, վոր պրոլետարիական իշխանության կողմից բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելու հարցը չի կարելի չփոթել բուրժուաղիայի տապալման և հենց այդ պրոլետարիական իշխանության նվաճման հարցը, հետ, վորս հեղափոխության յերկրորդ ետապում ատրատեղիստական լորունդի գլխավոր թեման է հանդիպանում։

Պրոլետարիատի դիկտուատուրայի ամենամեծագույն նվաճում ներից մեկը կայանում է նրանում, վոր նա բուրժուական հեղափոխությունը հասցեց մինչեւ վերջը և բոլորովին մաքրեց միջնադարյան կեղուր։ Գյուղի համար դա ամենագլխավոր և խմբակներու վճռական նշանակություն ունեցավ։ Առանց դրան չեր կարող կենացագործվել գյուղացիական պատերազմների միացումը պրոլետարիական հեղափոխության հետ, վորի մասին ասել և Մարքսը դեռ անցրալ զարդի յերկրորդ կեսին։ Առանց դրան չեր կարող ամրապնդվել հենց ինքը պրոլետարիական հեղափոխությունը։ Բնդամին պետք ե նկատի ունենալ հետեւյալ կարեւոր հանգամանքը։ Բուրժուական հեղափոխությունը մինչեւ վերջը հասցնելը յեղակի ակտ չե։ Գործնականում նա ծգձգից մի ամբողջ շրջան, ընդդիկելով վոչ միայն 1918 թվականի մասերը, ինչպես գուք պնդում եք ձեր նամակում, այլ և 1919 թվականի (Պովոլժիե – Ուրալ) և 1919–1920 թ. թ. (Ուլյանովսկ) մասերը։ Յես նկատի ունեմ կոլչչակի և Դենիկինի հարցակումը, յերբ ամբողջ գյուղացիության առաջ ծառացավ կարվածատիրական իշխանության վերաբեկանգնման վտանգը և յերբ նա, հենց վորպես ամբողջություն, հարկադրված յեղալ համարվել խորհրդացին իշխա-

նության շուրջը՝ նրա համար, մորակեսդի ասլահովի բուրժուական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելը և պահպանի իրեն համար այդ հեղափոխության պառազնեցը: Կենդանի կյանքի պրոցեսների այս բարդությունն ու բազմազանությունը, դիմուատո քայլի անմիջական սոցիալիստական խնդիրների՝ այս «տարրորինակ» միահյուսումը՝ բուրժուական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու խնդրի հետ՝ պետք է միշտ աչքի առաջ ունենալ վարպետի ճիշտ հասկանալ ինչպես Լենինից բերած ձեր շխտառները, այսպես ել կուսակցական լոգունդները կյանքում մարմնա վորելու մեխանիկան: Արդյօք կարելի՞ յե ասել, թե այդ միահյուսումը խոսում է հեղափոխության յերկրորդ ետապում կուտակության լողունդի ճիշտ չիններու մասին, թե այդ լողունդը չի տարբերվում հեղափոխության առաջին ետապի լոգունդից, Վոչ, չի կարելի ասել: Ընդհակարակը, այդ միահյուսումը միայն հաստատում է հեղափոխության յերկրորդ ետապում կուտակության լողունդի ճիշտ լինելը՝ չքալորագույն գյուղացիության հետ միասին, ընդդեմ կապիտալիստական բուրժուազիայի քաղաքում և զյուղում, հանո՛ւն պրոլետարիատի իշխանության և այլն: Ինչո՞ւ: Նրա համար, վոր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար՝ պետք եր նաև Հոկտեմբերին տապակել բուրժուազիայի իշխանությունը և հաստատել պրոլետարիատի իշխանությունը, վորովհետեւ միայն այդպիսի իշխանությունն է ընդունակ բուրժուական հեղափոխությանը մինչև վերջ հասցնելու, իսկ Հոկտեմբերին պրոլետարիատի իշխանություն հաստատելու համար՝ հարկավոր եր Հոկտեմբերին մոտ նախապատրաստել ու կազմակերպել համապատասխան քաղաքական մի ըանակ, ընդունակ տապալելու բուրժուազիային, ընդունակ հաստատելու պրոլետարիատի իշխանությունը, ըստ վորում կարիք չկա ապագուցելու, վոր մենք այդպիսի քաղաքական բանակ կա բոլցացանք նախապատրաստել ու կազմակերպել միայն այս՝ պրո լետարիատի դաշինք չքավորագույն գյուղացիության հետ ընդդեմ բուրժուազիայի, հանո՛ւն պրոլետարիատի դիմուատուրայի ըղունդի տակ: Պարզ ե, վոր առանց այդպիսի ստրատեգիական ըղունդի, վորն անցկացվեց 1917 թվականի ապրիլից մինչև 1917 թվականի հոկտեմբերը, մենք չեյինք կարող ունենալ այդպիսի քաղաքական բանակ, մենք չեյինք կարող, նշնակում ե, հաղթանակել Հոկտեմբերում, չեյինք տապալի բուրժուազիայի իշխանությունը և հետևապես հնարավորություն չեյինք ունենա բուրժուական հեղափոխությունը հասցնելու մինչև վերջը:

Ահա թե ինչու չի կարելի բուրժուական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելը հակադրել հեղափոխության յերկրորդ ե-

տապակի սպազմատեղիական լոգունդին, վորը խնդիր ուներ իրեն ապահովելու իշխանության գրավումը սպազմատեղիական կողմից: Սյու բոլոր «հակասություններից» խուսափելու միայն մի մի ջոց կա՝ ընդունել հեղափոխության առաջին ետապի (բուրժուա դեմոկրատական հեղափոխություն) ստրատեգիական լոգունդի և հեղափոխությունը յերկրորդ ետապի (պրոլետարական հեղափոխությունը, ընդունել միշնե յեղած հիմնական տարբերությունը, ընդունել, վոր հեղափոխության առաջին ետա մի ըրջանում մենք գնացել ենք ամբողջ գյուղացիության հետ միասին հանո՛ւն բուրժուա դեմոկրատական հեղափոխության, իսկ հեղափոխության յերկրորդ ետապի ըրջանում զնացել ենք չիմնական չքավորագույն գյուղացիության հետ միասին՝ կարպատալի իշխանության գեմ, հանուն պրոլետարական հեղափոխության: Իսկ ընդունել այդ հարկավոր ե, վորովհետեւ այդ բանին պարտավորեցնելում է մեզ գարսակարգային ուժերի անալիդը հեղափոխության առաջին և յերկրորդ ետապների պարբերությունը կար դեպքում չեր կարելի բացատրել այն փաստը, վոր մենք մինչ չեվ 1917 թվականի փետրվարը աշխատանք են տարել պրոլետարիատի բիկ բիտափ և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկ տատուրայի լողունդով, իսկ 1917 թվականի փետրվարից հետո այդ լողունդը փոխարինել ենք պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության սոցիալիստական դիկտուրայի լողունդով: Գյուղացիության համաձայնակեցք, ընկ. Յան-սկի, վոր մի լողունդի այդ փոխարինությունը մյուս լողունդով 1917 թվականի մարտ՝ ապրիլին՝ չի կարող բացատրվել ձեր սիեմայով:

Այս հիմնական տարբերությունը կուսակցության յերկու ստրատեգիական լոգունդների միջև՝ կենալ մատուանցել ե դեռ իր «Յերկու տակտիկա» բրոշյուրում: Կուսակցության լոգունդը բուրժուատու պետք ու պրոլետարիատական հեղափոխության նախապատրաստ ման ժամանակ՝ նաև ձեռիբարել ե այսպես:

«Պրոլետարիատը դեմոկրատական հեղաշրջումը պետք է տանի մինչև վերջը՝ իրեն միացնելով գյուղացիության մասսան, վորպեսզի ուժով ջախճախի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը» (տես հ. 8-րդ, եջ 96):

Այլ կերպ առած՝ ամբողջ գյուղացիության հետ ընդդեմ ինք նախարինության՝ բուրժուազիայի չեղողացրամով՝ հանո՛ւն դեմոկրատական հեղաշրջման:

Ինչ վերաբերում է կուսակցության լողունդին սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման ըրջանում, ապա նաև մեակարգերաբեկ ե այսպես:

«Պրոլետարիստը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի՝ միացնելով իրեն առզաբնակության կիսապրոլետարիկան տարրերի մասսային, վորագետի ուժով ջախչախի բուժուազիայի դիմադրությունը և ջատի գյուղացիության ու մանր բուժուազիայի անկայումությունը» (տես նույն տեղը):

Այլ կերպ ասած՝ չքայլորագույն գյուղացիության և բնակչանցապես աղօքարձնակության կիսապրոլետարիկան խարիսխի հետ միասին ընդլեմ բուրժուազիայի՝ մանր բուրժուազիայի չեղոքացումով քաղաքում և գյուղում, հանուն սոցիալիստական հեղաշրջման:

Այս 1905 թվականին եղու:

1917 թվի ապրիլին, Լենինը՝ բնորոշելով այն ժամանակվաքաղաքական դրությունը վորագես սրբության և գյուղացիության հեղափոխականը՝ դեմոկրատական դիկտատուրայի միադ չյուսումը բուրժուազիայի իրավական իշխանության հետ, ասել է.

«Ընթացիկ մոմենտի յուրահատկությունը Ռուսաստանում կայանում և հեղափոխության առաջին\*») ետապից, վորն իշխանությունը տվեց բուրժուազիային չնորդիվ պրոլետարիատի անբավարար գիտակցականության ու կազմակերպարհածության, — նրա յերկրորդ ետապին անցնելում, վորը իշխանությունը պետք է տա պրոլետարիատի և գյուղացիության չքավորագույն խավերի\*) ձեռքը» (տես Լենինի «Սպրիլյան թեզիները» — հ. 20-րդ, եջ 88):

1917 թվի ոգոստոսի վերջին, յերբ Հոկտեմբերին նախասարադատվելն առաջ եր սլանում, Լենինը «Գյուղացիները և բանվորները» հասուկ հոգվածում գրել է.

«Միայն պրոլետարիատն ու գյուղացիությունը\*») կարող են տարալել միապեսությունը — այսպիսին եր այն ժամանակվա վերաբերող (նկատի յե առնված 1905 թիվը: ի. Ստ.) մեր դաստիարակյին քարտքականության հիմնական բնորոշումը: Յեվ այդ բնորոշումը ճիշտ եր: 1917 թվականի փետրվարն ու մարտը ավելորդ անդամ հաստատեցին այդ: Միայն չքավորագույն գյուղացիությունը (կիսապրոլետարներին, ինչպես առում և մեր ծրագիրը) դեկտավարող պրոլետարիատը կարող է վերջացնել պատերազմը դեմոկրատական խռագաղությամբ, բուժել նրա վերքերը, սկսել անպայման անհարժեշտ և անհետաձգելի դաշտածածկի դարձած քայլերը գետի սուցականության բնորոշումը Հիմա» (տես հ. 21-րդ, եջ 111):

\*.) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.:

Այս չպետք է հասկանալ այնպես, թե մեզ մոտ, իբր, պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության դիկտատուրա յի հիմա: Այս, ինարկե, ճիշտ չե: Մենք զնացել ենք դեպի Հոկտեմբեր պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիության դիկտատուրայի տակ և կենսապորձել ենք այն Հոկտեմբերին ձեւականորեն, վորքանով վոր մենք բլոկ ունելի յինք ճախ երների հետ և դեկտավարությունը բաժանում ենք նրանց հետ, թեմեւ վաստարեն մեզ մոտ արգեն այն ժամանակ պրոլետարիատի թյան հետությունը յեր, վորովհետեւ մենք, բոլշևիկներս, մեծամասշիկտատուրա յեր, վորովհետեւ մենք բլուսական պակայն, դադարեց ձեւականորեն զացիության դիկտատորության, սակայն, դադարեց ձեւականորեն զոյլությունը ունենալ ձախս - ես-երական «պուտչից» հետո, եւ երների հետ յեղած բլոկի խզումից հետո, յերբ դեկտավարությունն ամբողջությամբ և կիսվին անցավ մի կուսակցության ձեռքը, մեր կուսակցության ձեռքը, վորը պետության դեկտավարությունը չի բաժանում և չի կարող բաժանել ուրիշ կուսակցության հետու: Այդ ել հենց կոչվում ե մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա:

Վերջապես, 1918 թվի նոյեմբերին, Լենինը՝ հետադարձ հայցք գցելով հեղափոխության անցած ուղղու վրա, դրեւ ե.

«Այս, մեր հեղափոխությունը բուրժուական ե, քանի դեռ մենք զնում ենք գյուղացիության, վորպես ամբողջության հետ միասին: Այս մենք գիտակցել ենք պարզից ել պարզ կերպով, 1905 թվից հարյուր և հազար անգամ ասել ենք, յերբեք չենք վորձել պատմական պրոցեսի արդ անհրաժեշտացած աստիճանը վո՞չ ցատկել անցնել, վո՞չ ել գեկրետներով վերացնել... Բայց 1917 թվին, պարի ամսից, Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ, մինչև իշխանության գրավումը\*), մեր կողմից\*), մենք ասել ենք բացահայտողներ և պարզաբանել ժողովրդին. հեղափոխությունը հիմա դրա վրա կանգ առնել չի կարող, վորովհետեւ յերկիրն առաջ է զնացել, առաջ և քայլել կապիտալիզմը, մինչև չտեսնելած չափերի յե հասել քայլայումը, վորը պահանջում է (ցանկանում և արդյոք զա վորմե մեկը՝ թե վո՞չ), պահանջում է քայլ մեր դեպի առաջ գետի առաջ, դեպի սոցիալիզմը: Վորովհետեւ այլ կերպ առաջ զնալ, այլ կերպ փրկել պատերազմից խոշտանգեցների պատահ առաջ զնալ, այլ կերպ փրկել պատերազմից խոշտանգեցների վածքը բերեացնել աշխատավորների և շաված յերկիրը, այլ կերպ բերեացնել աշխատավորների և շաված հագործվողների տանջանքները՝ չի կարելի: Դուրս յեկավ հենց այնպես, ինչպես ասել ենք: Հեղափոխության ընթաց-

\*) Ընդգծումն իմն ե: ի. Ստ.:

Քը հաստատեց մեր դատողության ճիշտ լինելը։ Սկզբում «ամբողջ» գյուղացիության հետ միասին ընդդեմ միապեսության, ընդդեմ կարվածատերերի, ընդդեմ միջնադարի (և քանի վոր հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուատ - դեմոկրատական)։ Այնուհետև՝ չքավորագույն դյուցացիության հետ միասին, կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործվողների հետ միասին, ընդդեմ կապի տալիզմի, այդ թվում՝ ընդդեմ գյուղական հարուստների, կուլաների, սպեկուլյանտների,\*) և քանի վոր հեղափոխությունը դառնում է սոցիալիստական» (տես Հ. 23-րդ, և 390-391)։

Ինչպես տեսնում եք, Լենինը բարձից ընդդեմ և ամբողջ խորությունն այն տարրերության, վոր կա բուրժուական - դեմոկրատական հեղափոխության նախապատրաստման շրջանի առաջին ստրատեգիական լողունողի և Հոկտեմբերի նախապատրաստման շրջանի յերկրորդ ստրատեգիական լորունդի միջն։ Այնտեղ - լողունդն ե՝ ամբողջ գյուղացիության հետ ընդդեմ ինքնակարգության հետ ընդդեմ բուրժուապահայիր։

Այն փաստը, վոր բուրժուական հեղափոխությունը, մինչև վերջը հասցնելը յերկարածպվեց մի ամբողջ շրջան Հոկտեմբերից հետո, վոր, ինչ չափով վոր մենք մինչև վերջը հասցինք բուրժուական հեղափոխությունը, մեղ չեր կարող չհամակրել «ամբողջ» դյուղացիությունը, — այս փաստը, ինչպես յես ասացի արդեն վերևում, մարդաչափ անդամ չի տառանի այն հիմնական դրույթը, վոր մենք դեպի Հոկտեմբեր զնացինք և հազթանակեցինք Հոկտեմբերում չքալորագույն գյուղացիության հետ միասին, վոր տաղալցինք բուրժուապահի իշխանությունը և հաստատեցինք պլրուետարիատի դիկտատուրան (վորի խնդիրներից մեկն եր բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելը) չքալորագույն գյուղացիության հետ միասին՝ կուլսկության (նորմագես գյուղացիներ) դիմագրության և միջակ դյուղացիության կողմից տառանումների պայմաններում։

Թվում ե պարզ ե։

3) Դուք ապա գրում եք մեր նամակում։

Ճիշտ ե արդյոք այն պնդումը, թե «մենք մոտեցանք Հոկտեմբերին — դաշինք գյուղական չքալորության հետ՝ միջակի չեզոքացումով, — գողունդով»։ Վոչ, ճիշտ չ։ Վերբեպում արդեն նշված նկատառումներից և Լենինից բերված

\*) Ընդդեմումն իմն ե։ Ի. Ստ.։

մեջբերումներից յերևում ե, վոր այդ լոգումնը կարող եք ծաղել միայն այն ժամանակ, յերբ «Հասունացել եր դասակարգային բաժանումը գյուղացիության ներսում» (Լենին), այսինքն՝ «1918 թվի ամառը և աշնան»։

